ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"12" հոկտեմբերի 2012թ. № 102-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» (ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ «ՏԵՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԵՎ «ԽՆՁՈՐԵՍԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ») ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ Գ.ԴՈԼՈՒՆՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 4-րդ կետով, համաձայն «Գորիսի բժշկական կենտրոն» (համատեղության կարգով «Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և «Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն») փակ բաժնետիրական ընկերությունների վերստուգող Գայանե Դոլունցի անձնական դիմումի, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ**

1. 2012 թվականի հոկտեմբերի 12-ից լուծել «Գորիսի բժշկական կենտրոն» (համատեղության կարգով «Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և «Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն») փակ բաժնետիրական ընկերությունների վերստուգող Գայանե Դոլունցի հետ 2011թվականի ապրիլի 13-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

Հիմք՝ Գ. Դոլունցի անձնական դիմումը:

2. Կազմակերպությունների տնօրեններին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Գ. Դոլունցի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ. հոկտեմբերի 12
ք. Կապան